

Գ.-ի դասախոսություններին հաջորդում էին մեր խմբի քննարկումները: Կային շատ բաներ, որ դեռևս պարզ չէին ինձ համար: Սակայն մյուս կողմից, արդեն որոշ բաների միջև կապ էի տեսնում. անսպասելիորեն մեկը գալիս էր բացատրելու մյուսին, որոնց միջև կարծես նախկինում կապ գոյություն չուներ: Սկսել էին ուրվագծվել համակարգի որոշ հատվածներ, ինչպես աստիճանաբար կնշմարվեին մարդկային ստվերները կամ բնապատկերները նկարձ երևակելիս: Սակայն կային շատ բաներ, որ դեռևս դատարկ էին և անավարտ: Միննույն ժամանակ որոշ դեպքերում իմ սպասումները չարդարացվեցին: Սակայն ես փորձում էի եզրակացություններ չանել և սպասել: Երբեմն նախկինում երբևիցե չլսած մեկ բառ կարող էր փոխել ողջ պատկերը, և ես ստիպված էի լինում ամեն ինչ վերակառուցել և փոխարինել հինը նորով: Ինձ համար պարզ դարձավ, որ երկար ժամանակ կպահանջվեր ողջ համակարգը ճիշտ պատկերացնելու համար: Ինձ համար շատ տարօրինակ էր թվում այն փաստը, թե ինչպես մարդիկ, ընդամենը մեկ անգամ այցելելով մեր դասախոսությունները, անմիջապես *ընկալում էին*, թե ինչի մասին էր խոսքը, բացատրում այն ուրիշներին և հստակ կարծիք կազմում մեր մասին: Պետք է խոստովանեմ, որ նման դեպքերում ես շատ հաճախ մտաբերում էի Գ.-ի և Մոսկվայի խմբի հետ իմ ունեցած հանդիպումը: Ես նույնպես այն ժամանակ շտապում էի Գ.-ի և նրա աշակերտների վերաբերյալ հապճեպ դատողություններ անել: Սակայն ինչ-որ բան ինձ դրանից հետ պահեց: Եվ այժմ, գիտակցելով այս մտքերի մեծագույն արժեքը, սարսափում եմ այն մտքից, թե որքան հեշտությամբ ես կարող էի դրանք անտեսել, թե որքան հեշտությամբ ես կարող էի անտեղյակ մնալ Գ.-ի գոյության մասին և որքան հեշտությամբ ես կարող էի կորցնել նրան իմ տեսադաշտից, եթե չխնդրեի ևս մեկ հանդիպում:

Իր դասախոսություններից գրեթե յուրաքանչյուրի ժամանակ Գ.-ն անդրադառնում էր մի թեմայի, որն իր կարծիքով մեծ կարևորություն ուներ, սակայն մեզնից շատերի համար դժվար էր յուրացնել:

«Կա երկու ճանապարհ, որով կարող է ընթանալ մարդու զարգացումը. դրանք են *գիտելիքների* ճանապարհը և *գոյի* ճանապարհը: Ճիշտ զարգացման ժամանակ գիտելիքների և գոյի ճանապարհները միաժամանակ են զարգանում՝ մեկը մյուսին զուգահեռ և մեկը մյուսին օգնելով: Սակայն, եթե գիտելիքների ճանապարհն առաջ է անցնում գոյի

ճանապարհից, կամ, եթե գոյի ճանապարհն է առաջ անցնում գիտելիքների ճանապարհից, մարդու զարգացումը սխալ ընթացք է ստանում և ուշ թե շուտ այն պետք է կանգ առնի: Մարդիկ հասկանում են, թե ինչ է նշանակում «գիտելիք» և նրանք տեղեկացված են, որ կա գիտելիքների տարբեր մակարդակ: Նրանք հասկանում են, որ գիտելիքը կարող է լինել մեծածավալ կամ փոքրածավալ, այսինքն՝ ունենալ այս կամ այն որակ: Սակայն գիտելիքի ընկալումը գոյի հարաբերակցությամբ նրանց համար հասկանալի չէ: «Գոյ»-ը նրանց համար պարզապես նշանակում է «գոյություն ունենալ», որի հակառակն է «գոյություն չունենալը»: Նրանք չեն հասկանում, որ գոյը և լինելը կարող են պատկանել տարբեր մակարդակների և կատեգորիաների: Օրինակ վերցնենք հանքաքարի և բույսի գոյությունը: Դրանք տարբեր մակարդակներին պատկանող գոյեր են: Բույսի և կենդանու գոյերը նույնպես տարբեր են, ինչպես նաև կենդանունը և մարդունը: Սակայն երկու մարդկանց գոյերը կարող են ավելի շատ տարբերվել միմյանցից, քան հանքաքարի և կենդանու գոյերը: Մա հենց այն է, ինչ մարդիկ չեն հասկանում: Եվ նրանք չեն հասկանում, որ գիտելիքը կախված է գոյից: Նրանք ոչ միայն չեն հասկանում, այլ չեն ցանկանում հասկանալ այն: Մասնավորապես արևմտյան մշակույթներում մարդը կարող է ունենալ խորը գիտելիքներ, օրինակ՝ կարող է լինել տաղանդաշատ գիտնական, հայտնագործություններ անել, աջակցել գիտության առաջադիմությանը և միևնույն ժամանակ լինել և նույնիսկ ունենալ փոքրոգի, էսասեր, մանրախնդիր, ստոր, նախանձ, փառասեր, միամիտ և ցրված լինելու իրավունքը: Այստեղ ընդունված է, որ դասախոսը պետք է ամենուր մոռանա իր անձրևանոցը:

Մինչդեռ դա նրա գոյն է: Իսկ մարդիկ կարծում են, որ նրա գիտելիքները կախված չեն նրա գոյից: Արևմտյան մշակույթի մարդիկ շատ են արժեքավորում մարդու գիտելիքների մակարդակը, սակայն նրանք չեն արժեքավորում մարդու գոյի մակարդակը և չեն էլ ամաչում իրենց իսկ գոյի ցածր մակարդակից: Նրանք նույնիսկ չեն հասկանում, թե դա ինչ է նշանակում: Եվ չեն հասկանում, որ մարդու գիտելիքների մակարդակը կախված է նրա գոյի մակարդակից:

Եթե գիտելիքները շատ ավելի առաջ են անցնում մարդու գոյից, ապա դրանք դառնում են տեսական և վերացական, կյանքի համար ոչ կիրառելի և իրականում վնասակար, քանի որ կյանքին ծառայելու և մարդկանց իրենց դժվարությունների դեմ պայքարում օգնելու փոխարեն, գիտելիքները սկսում են բարդացնել նրա կյանքը, նորանոր խնդիրներ, անախորժություններ ստեղծել, դժբախտություններ բերել, որոնք նախկինում գոյություն չունեին:

Դրա պատճառն այն է, որ եթե սվյալ գիտելիքը համաձայնության մեջ չէ գոյի հետ, ապա այն չի կարող լինել լիարժեք և համապատասխանել մարդու կարիքներին: *Ինչ-որ բանի* մասին գիտելիքը միշտ կգուգորդվի անիրագրելությամբ *մեկ այլ* բանի մասին. *դետալի* մասին գիտելիքը՝ առանց *ամբողջի* իմացության, *ձևի* մասին գիտելիքը՝ առանց *բովանդակության* իմացության:

Գոյի նկատմամբ գիտելիքի նման գերակշռություն է դիտարկվում ժամանակակից մշակույթում: Գոյի մակարդակի կարևորությունը և արժեքը ամբողջովին տրվել է մոռացության: Մոռացվել է նաև այն, որ գոյի մակարդակն է կանխորոշում գիտելիքների մակարդակը: Ի դեպ, գոյի սվյալ մակարդակի վրա գտնվելը սահմանափակում է գիտելիքների հնարավորությունները: Նման գոյի շրջանակներում գիտելիքների *որակը* հնարավոր չէ բարելավել. սվյալ դեպքում միայն հնարավոր է միևնույն բնույթի տեղեկատվություն հավաքագրել: Գիտելիքների բնույթը հնարավոր է փոխել՝ միայն գոյի էությունը փոխելու դեպքում:

Մարդու գոյն ինքնին ունի տարբեր կողմեր: Ժամանակակից մարդու ամենաբնորոշ գիծը նրա մեջ *միասնության բացակայությունն է*: Դեռ ավելին՝ նրա մեջ բացակայում են նույնիսկ այն հատկությունների նշույլները, որոնք նա շատ հաճախ կցանկանար ինքն իրեն վերագրել. դրանք են «պարզ գիտակցությունը», «ազատ կամքը», «մշտական էգոն կամ Ես-ը» և «անելու» ընդունակությունը: Դուք կգարմանաք, եթե ասեմ, որ ժամանակակից մարդու գոյի գլխավոր հատկությունը, որ բացատրում է նրանում *բոլոր մյուս հատկությունների բացակայությունը, քունն է*:

Ժամանակակից մարդը քնի մեջ է ապրում. քնի մեջ ծնվում է, քնի մեջ էլ մահանում: Քնի մասին և կյանքում դրա նշանակության և դերի մասին մենք ավելի ուշ կխոսենք: Այս պահին միայն մեկ բանի մասին մտածեք՝ ինչպիսի՞ *գիտելիքներ* կարող է ունենալ քնած մարդը: Եվ, եթե մտածեք այդ մասին և միևնույն ժամանակ հիշեք, որ քունը մարդու գոյի հիմնական բնորոշող գիծն է, ապա ձեզ համար միանգամայն պարզ կդառնա, որ, եթե մարդը իսկապես ցանկանում է գիտելիքներ ձեռք բերել, նա առաջին հերթին պետք է մտածի այն մասին, թե ինչպես արթնանալ, այսինքն՝ ինչպես փոխել իր *գոյը*:

Արտաքուստ մարդու գոյը շատ տարբեր ձևեր է ընդունում՝ ակտիվություն կամ պասիվություն, ճշմարտախոսություն կամ ստելու հակում, անկեղծություն կամ կեղծավորություն, խիզախություն, երկչոտություն, ինքնատիրապետում, անառակություն, դյուրագրգիռություն, եսասիրություն, ինքնագոհաբերության պատրաստակամություն, հպարտություն, սնափառություն, մեծամտություն, աշխատասիրություն,

ծուլություն, բարոյականություն, անբարոյականություն: Այս ամենից և դեռ շատ այլ բաներից է բաղկացած մարդու գոյը:

Սակայն այս ամենը մարդու մոտ *մեխանիկական* է: Եթե նա ստում է, դա նշանակում է, որ չի կարող չասել: Եթե նա ասում է ճշմարտությունը, նշանակում է, որ նա չի կարող չասել ճշմարտությունը, և այդպես է նաև մյուս դեպքերում: Ամեն բան տեղի է ունենում: Մարդը որևէ բան չի կարող անել ոչ իր ներսում, ոչ էլ իրենից դուրս:

Սակայն կա չափ ու սահման: Ընդհանուր առմամբ ժամանակակից մարդու գոյը շատ ցածրորակ է: Սակայն այն կարող է այնքան վատորակ լինել, որ որևէ փոփոխության հնարավորություն չլինի: Սա միշտ պետք է հիշել: Այն մարդկանց գոյը, որ կարելի է փոխել շատ հաջողակ են: Բայց կան մարդիկ, որ անկասկած հիվանդ են, կոտրված մեքենաներ, որոնց հետ որևէ բան անելն անհնար է: Եվ նման մարդիկ մեծամասնությունն են կազմում: Եթե լավ խորհեք, ապա կհասկանաք, թե ինչու շատ քչերը կարող են ստանալ իրական գիտելիքները: Նրանց գոյը կանխարգելում է դա:

p.67

Ընդհանուր առմամբ, գիտելիքների և գոյի միջև հավասարակշռությունը շատ ավելի կարևոր է, քան մեկի կամ մյուսի զարգացումը: Ամեն դեպքում, միայն գիտելիքների կամ միայն գոյի զարգացումը ցանկալի չէ: Չնայած դրան, հենց նման *միակողմանի* զարգացումն է մարդկանց ամենից շատ զրավում:

Եթե գիտելիքները գերազանցում են գոյին, *մարդը գիտի, բայց անելու ընդունակություն չունի*: Նման գիտելիքները անօգուտ են: Մյուս կողմից, եթե գոյը գերազանցում է գիտելիքներին, ապա մարդը որոշ բաներ կարող է անել, սակայն չգիտի, թե ինչ անել: Մարդու ձեռք բերած գոյը որևէ նպատակի չի ծառայում, իսկ գոյը ձեռք բերելու համար թափված ջանքերն էլ ապարդյուն են անցնում: Մարդկության պատմության մեջ կան շատ օրինակներ, երբ ողջ քաղաքակրթություններ են կործանվել, քանի որ գիտելիքները գերազանցել են գոյին, կամ գոյը գերազանցել է գիտելիքներին:

- «Ինչպիսի՞ն կլինեն արդյունքները, եթե գիտելիքների ուղղությունը զարգանա առանց գոյի ուղղության կամ, եթե գոյի ուղղությունը զարգանա առանց գիտելիքների ուղղության»:

- «Գիտելիքների ուղղության զարգացումը առանց գոյի ուղղության զարգացման ստեղծում է *թույլ յոզի*», - պատասխանեց Գ.-ն, «այլ կերպ ասած՝ մի մարդու, որ շատ բան գիտի, բայց չի կարող որևէ բան անել, մի մարդու, որ *չի գիտակցում* իր գիտելիքները (նա ընդգծեց այս բառերը), մի մարդու, որ *գնահատելու ընդունակություն* չունի, այսինքն՝ մի մարդու, որ չի տարբերակում մի տեսակի գիտելիքը մեկ այլ տեսակի գիտելիքից: Իսկ գոյի ուղղության զարգացումը առանց գիտելիքների զարգացման ստեղծում է *հիմար սրբի*, այլ կերպ ասած՝ մի մարդու, որը կարող է մի շարք բաներ անել, բայց ով չգիտի ինչ անել կամ ինչպես անել: Եթե նա որևէ բան անում է, ապա իր սուբյեկտիվ զգացմունքներից ելնելով է դա անում, ինչը նրան կարող է մեծապես շեղել, դրդել լուրջ սխալների և իրականում ստիպել նրան անել այն, ինչն իր ցանկությանը հակառակ է: Երկուսի դեպքում էլ՝ ինչպես *թույլ յոզը*, այնպես էլ *հիմար սուրբը*, փակուղու առջև են կանգնում: Ոչ մեկը, ոչ էլ մյուսը ենթակա չեն հետագա զարգացմանը:

Այս ամենը հասկանալու, ինչպես նաև ընդհանրապես գիտելիքների և գոյի բնույթը, նրանց փոխհարաբերությունը հասկանալու համար անհրաժեշտ է հասկանալ գիտելիքների և գոյի ունեցած հարաբերությունը ըմբռնողության հետ:

*«Գիտելիքը մի բան է, ըմբռնողությունը մեկ այլ :*

Մարդիկ շատ հաճախ շփոթում են այս հասկացությունները և հստակորեն չեն տեսնում նրանց միջև եղած տարբերությունը:

Ինքնին գիտելիքը չի նպաստում ըմբռնողականությանը: Ոչ էլ ըմբռնողությունն է մեծանում գիտելիքի ավելացման հետ մեկտեղ: Ըմբռնողությունը կախված է նրանից, թե ինչպիսին են գոյի և գիտելիքների միջև եղած հարաբերությունը: Ըմբռնողությունը գիտելիքների և գոյի արդյունքն է: Գիտելիքները և գոյը չպետք է իրարից շատ հեռանան, այլապես ըմբռնողությունը երկուսից էլ կառանձնանա: Միննույն ժամանակ գիտելիքների և գոյի միջև հարաբերությունը չի փոխվում սուսկ գիտելիքների ավելացման շնորհիվ: Փոփոխությունը տեղի է ունենում միայն այն ժամանակ, երբ գիտելիքների հետ մեկտեղ աճում է նաև գոյը: Այլ կերպ ասած՝ ըմբռնողությունը աճում է միմիայն գոյի աճին զուգընթաց:

Հասարակ մտածողության մարդիկ չեն տարբերում ըմբռնողությունը գիտելիքներից: Նրանք կարծում են, որ ըմբռնողության աստիճանը կախված է գիտելիքների խորությունից: Այդ պատճառով կուտակում են գիտելիքներ, սակայն նրանց հայտնի չէ, թե ինչպես կարելի է կուտակել ըմբռնողությունը, և դա նրանց նույնիսկ չի էլ անհանգստացնում:

Մինչդեռ այն մարդը, ով սովոր է ինքնադիտարկման գործընթացին, վստահաբար գիտի, որ իր կյանքի տարբեր շրջաններում ունեցել է միևնույն

գաղափարի կամ միևնույն մտքի բացարձակ այլակերպ ընկալում: Նրան շատ հաճախ տարօրինակ է թվում այն, թե ինչպես նա կարող էր այդքան սխալ ընկալել մի բան, որն իր կարծիքով, այժմ ճիշտ է ընկալում: Միևնույն ժամանակ նա գիտակցում է, որ իր գիտելիքները չեն փոխվել, քանի որ նա տվյալ առարկայի մասին գիտեր այնքան, որքան գիտի այժմ: Այդ դեպքում ի՞նչն է փոխվել: Նրա գոյն է փոխվել: Եվ գոյը փոխվելուն պես, պետք է փոխվի նաև ըմբռնողությունը:

Գիտելիքների և ըմբռնողության միջև տարբերությունը պարզ կդառնա, երբ գիտակցենք, որ գիտելիքները կարող են լինել կենտրոններից մեկի գործառույթը: Մինչդեռ ըմբռնողությունը երեք կենտրոնների գործառույթն է: Այսպիսով մտածողության ապարատը կարող է որևէ բան *իմանալ*: Սակայն ըմբռնողությունը երևան կգա այն ժամանակ, երբ մարդը զգա և ըմբռնի այն ամենն, ինչ կապված է դրա հետ:

Մենք ավելի վաղ խոսեցինք մեխանիկականության մասին: Մարդը չի կարող ասել, որ հասկանում է, թե մեխանիկականությունն ինչ է, եթե նա միայն *գիտի* այդ մասին իր ուղեղով: Նա իր ողջ զանգվածով, իր ամբողջ գոյով պետք է *զգա* այն. այս դեպքում նա կհասկանա դա:

Գործնականում մարդիկ շատ լավ տարրոշում են գիտելիքների և ըմբռնողության միջև եղած տարբերությունները: Նրանք գիտակցում են, որ իմանալ և *իմանալ, թե ինչպես անել* երկու տարբեր հասկացություններ են և որ *իմանալ, թե ինչպես անելը* միայն գիտելիքներով չի պայմանավորված: Սակայն գործնականից դուրս, մարդկանց համար պարզ չէ, թե ինչ է նշանակում «ըմբռնողություն»:

Որպես կանոն, երբ մարդիկ գիտակցում են, որ որևէ բան չեն հասկանում, ապա փորձում են դրան *անուն գտնել*. գտնելով դրանց անունը՝ նրանք ասում են, որ «հասկանում են»: Սակայն «անուն գտնելը» դեռևս չի նշանակում «հասկանալ»: Դժբախտաբար մարդիկ շատ հաճախ բավարարվում են անուններով: Ենթադրվում է, որ այն մարդիկ, ովքեր գիտեն շատ անուններ, այսնինքն՝ շատ բառեր, ավելի շատ են հասկանում: Սակայն այդպես է լինում միայն պրակտիկ գործունեությունից

p.68

դուրս, որտեղ նրանց տգիտությունը շատ շուտով բացահայտվում է: Կյանքում գիտելիքների ուղղության և գոյի ուղղության խոտորման պատճառներից մեկը, ինչպես նաև հասկացողության բացակայությունը, որը մասամբ այս խոտորման պատճառն է, մասամբ էլ դրա արդյունքը, պետք է փնտրել այն լեզվում, որով խոսում են մարդիկ: Այս լեզուն լի է սխալ

գաղափարներով, սխալ դասակարգումներով, սխալ գուգորություններով: Եվ գլխավոր բանն այն է, որ առօրեական մտածողության բնորոշ գծերից ելնելով, այսինքն՝ դրա անորոշության և անստույգության պատճառով, յուրաքանչյուր բառ կարող է ունենալ հազարավոր տարբեր իմաստներ՝ կախված խոսողի տրամադրության տակ գտնվող նյութից և նրանում գործող կոմպլեքսային գուգորություններից: Մարդիկ պարզապես չեն գիտակցում, թե որքան սուբյեկտիվ է նրանց խոսքը, այսինքն՝ թե որքան տարբեր բաներ է նրանցից յուրաքանչյուրն ասում՝ օգտագործելով միևնույն բառերը: Նրանք չեն գիտակցում, որ նրանցից յուրաքանչյուրն իր լեզվով է խոսում՝ հասկանալով մարդկանց խոսքը միայն մոտավորապես կամ ընդհանրապես չհասկանալով այն. նրանք չեն էլ կռահում, որ նրանցից յուրաքանչյուրը խոսում է մյուսին անհայտ լեզվով: Մարդիկ մեծապես համոզված են և հավատում են, որ խոսում են միևնույն լեզվով և հասկանում են միմյանց:

Իրականում այս համոզմունքը որևէ հիմնավորում չունի: Լեզուն, որով նրանք խոսում են հարմարեցված է միայն գործնական կյանքի համար: Մարդիկ կարող են իրար միայն գործնական բնույթի գիտելիքներ հաղորդել, բայց հենց որ նրանք ավելի բարդ բնագավառ են շոշափում, անմիջապես կորցնում են իրենց և, չգիտակցելով այդ ամենը, դադարում են հասկանալ միմյանց: Մարդիկ հաճախ, եթե ոչ միշտ, կարծում են, որ հասկանում են միմյանց կամ կարող են, բոլոր դեպքերում, հասկանալ իրար, եթե պարզապես փորձեն կամ ցանկանան: Նրանք երևակայում են, թե հասկանում են այն գրքերի հեղինակներին, որ կարդում են և որ մյուս մարդիկ էլ հասկանում են նրանց: Դա նույնպես պատրանքներից մեկն է, որ մարդիկ ստեղծում են իրենց համար և որի ներքո նրանք ապրում են: Իրականում ոչ ոք ոչ ոքի չի հասկանում: Երկու մարդ կարող են խորապես համոզված լինելով միևնույն բանը տարբեր անուններով կոչել կամ վիճել՝ նույնիսկ չկասկածելով, որ նրանցից երկուսն էլ համակարծիք են: Կամ հակառակը՝ երկու մարդ, միևնույն բառերը օգտագործելով, եևակայում են, թե համամիտ են և հասկանում են միմյանց, մինչդեռ իրականում նրանք շատ տարբեր բաներ են ասում և բացարձակապես միմյանց չեն հասկանում:

Եթե վերցնենք խոսքում հաճախ գործածվող ամենահասարակ բառերը և փորձենք վերլուծել դրանց իմաստը, ապա անմիջապես կնկատենք, որ մարդն իր կյանքի յուրաքանչյուր պահին այն օգտագործելիս տալիս է յուրօրինակ իմաստ, որ մեկ ուրիշը երբևիցե չի կարող հաղորդել կամ կասկածել:

Եկեք որպես օրինակ վերցնենք «մարդ» բառը և պատկերացնենք մի գրույց, որը տեղի է ունենում մի խումբ մարդկանց միջև, որտեղ «մարդ» բառը հաճախ է գործածվում: Առանց չափազանցության կարելի է ասել, որ «մարդ» բառը կունենա այնքան իմաստ, որքան որ մասնակից կա տվյալ գրույցում և այն, որ այս իմաստները որևէ ընդհանրություն չեն ունենա:

«Մարդ» բառն արտասանելիս յուրաքանչյուրն ակամա դիտարկում է տվյալ բառն այն տեսանկյունից, որից նա սովոր է դիտարկելու մարդուն, կամ այն տեսանկյունից, ըստ որի, այս կամ այն պատճառով, նա տվյալ պահին որոշակի կերպով է դիտարկում մարդուն: Որևէ մեկն այս պահին կարող է մտահոգված լինել սեռերի միջև հարաբերությունների խնդիրներով: Այս դեպքում «մարդ» բառը նրա համար ընդհանուր բնույթ չի կրի, և այն լսելով՝ նա առաջին հերթին ինքն իրեն կհարցնի. «Ո՞րը՝ տղամարդը, թե կինը»: Մյուսը կարող է հավատացյալ լինել և նրա առաջին հարցը կլինի. «Քրիստոնյա, թե՞ ոչ քրիստոնյա»: Երրորդը կարող է բժիշկ լինել և «մարդ» գաղափարը նրա համար կարող է ունենալ «հիվանդ մարդ» կամ «առողջ մարդ» նշանակությունը՝ իհարկե իր մասնագիտական տեսանկյունից: Սպիրիտուալիստը «մարդուն» կդիտարկի նրա «աստեղային մարմնի», «ետմահու կյանքի» տեսանկյունից և այլն: Եթե նրան հարցնեն, նա միգուցե ասի, որ մարդիկ բաժանվում են մեղիումների և ոչ-մեղիումների: Մարդու մասին խոսելիս՝ նատուրալիստը իր մտքի ծանրության կենտրոնը կտեղափոխի մարդու՝ կենդանաբանական տիպ լինելու գաղափարի վրա. այսինքն՝ մարդու մասին խոսելիս, նա կմտածի նրա ատամների կառուցվածքի, մատների, դիմագծերի, աչքերի միջև հեռավորության մասին: Փաստաբանը մարդուն կդիտարկի որպես վիճակագրական միավորի, կամ իրավաբանական սուբյեկտի, կամ պոտենցիալ հանցագործի, կամ էլ հնարավոր հաճախորդի:

Բարոյականություն քարոզողը, «մարդ» բառն արտասանելիս, պարտադիր կերպով դրա մեջ կներմուծի բարու և չարի գաղափարը, և այդպես շարունակ:

Մարդիկ չեն նկատում բոլոր այդ հակասությունները, չեն նկատում, որ նրանք երբևիցե իրար չեն հասկանում, որ միշտ խոսում են տարբեր բաներից: Ակնհայտ է, որ պատշաճ ուսումնասիրության և մտքերի հստակ փոխանակման համար անհրաժեշտ է ճշգրիտ լեզու, որը թույլ կտա



հասկանալ, թե մարդը կոկնկրեստ ինչ նկատի ունի, որը կցուցանի այն տեսանկյունը, որ կողմից, որ դիտարկվում է տվյալ գաղափարը և կկարողանա սահմանել տվյալ գաղափարի ձգողականության ուժը: Այս միտքը կատարելապես պարզ է, և գիտության յուրաքանչյուր ճյուղ ձգտում է իր համար մշակել և սահմանել ճշգրիտ լեզու: Սակայն գոյություն չունի ունիվերսալ լեզու: Մարդիկ շարունակ խառնում են տարբեր գիտությունների լեզուները և երբևիցե չեն կարողանում սահմանել դրանց ստույգ հարաբերակցությունը: Եվ նույնիսկ գիտության առանձին ճյուղերում նոր տերմինաբանություններ, նոր անվանացուցակներ են անընդմեջ երևան գալիս: Եվ որքան հեռուն ենք գնում, այնքան գործն ավելի է բարդանում: Թյուրիմածությունները բազմապատկվում են, քանալու փոխարեն շատանում են և կան բոլոր նախադրյալները հավատալու համար, որ նույն տեմպերով կշարունակեն շատանալ: Իսկ մարդիկ էլ ավելի ու ավելի քիչ կսկսեն իրար հասկանալ:

Ճշգրիտ ընմբոնման համար անհրաժեշտ է ճշգրիտ լեզու: Հնագույն գիտելիքների ուսումնասիրությունը սկսվում է տվյալ լեզվի ուսումնասիրությունից՝ հնարավոր դարձնելով անմիջապես ստույգ կերպով սահմանել, թե ինչ է ասվել, որ տեսանկյունից և ինչի կապակցությամբ: Այս նոր լեզուն գրեթե նոր տերմինաբանություն կամ անվանակարգություն չի պարունակում, սակայն խոսքի կառուցվածքը հիմնվում է նոր սկզբունքի, այն է՝ հարաբերականության սկզբունքի վրա: Այսինքն՝ բոլոր գաղափարներում ներմուծվում է հարաբերականությունը և այսկերպ հնարավոր է դառնում ճիշտ սահմանել միտքը, քանզի առօրյա լեզվում բացակայում են հարաբերականության դրսևորումները: Երբ մարդը յուրացնում է այս լեզուն, դրա օգնությամբ նրան կարող է փոխանցվել և հաղորդակցվել մեծ քանակությամբ գիտելիքներ և տեղեկատվություն, որը սովորական լեզվի միջոցով հնարավոր չէ անել՝ նույնիսկ ամեն հնարավոր գիտական և փիլիսոփայական տերմինների օգնությամբ:

Նոր լեզվի ֆունդամենտալ հատկությունն այն է, որ նրանում պարունակվող բոլոր գաղափարները կենտրոնացված են մեկ գաղափարի շուրջ, այսինքն՝ նրանց փոխհարաբերակցությունը դիտարկվում է մեկ գաղափարի տեսանկյունից: Դա էվոլյուցիայի գաղափարն է: Իհարկե խոսքը ոչ թե մեխանիկական էվոլյուցիայի մասին է, քանի որ նման էվոլյուցիա գոյություն չունի, այլ գիտակից և կամավոր էվոլյուցիայի մասին, որը միակ հնարավոր տարբերակն է:

Աշխարհում ամեն ինչ, սկսած արեգակնային համակարգից մինչև մարդ, մարդուց մինչև ատոմ շարժվում է կամ դեպի վերև, կամ դեպի ներքև, կամ զարգանում է, կամ դեգրադացվում, կամ կատարելագործվում է, կամ

քայքայվում: *Մակայն ոչինչ մեխանիկորեն չի զարգանում:* Միայն դեգրադացիան և ավերածությունը կարող են մեխանիկական ընթացք ստանալ: Այն ինչ հնարավոր չէ զարգացնել գիտակցաբար, դեգրադացիայի է ենթարկվում: Դրսից հնարավոր է ստանալ

p.71

օժանդակություն միայն եթե այն գնահատվում և ընդունվում է, նույնիսկ եթե սկզբում դա արվում է զգացմունքի միջոցով:

Լեզվի կառուցվածքը, որի միջոցով հնարավոր է հասնել ըմբռնման, ցուցանում է ուսումնասիրվող օբյեկտի և դրա հնարավոր էվոյուցիայի միջև եղած հարաբերությունը, ինչպես նաև դրա *տեղը* զարգացման սանդուղքի վրա:

Այս նպատակով մեր գաղափարներից շատերը *ստորաբաժանված են* ըստ այս էվոյուցիայի աստիճանների:

Եկեք կրկին անդրադառնանք *մարդու* գաղափարին: Այն լեզվում, որով ես եմ խոսում, «մարդ» բառի փոխարեն օգտագործվում է *յոթ բառ*, այն է՝ մարդ համար մեկ, մարդ համար երկու, մարդ համար երեք, մարդ համար չորս, մարդ համար հինգ, մարդ համար վեց և մարդ համար յոթ: Այս յոթ գաղափարների շնորհիվ մարդու մասին խոսելիս արդեն հնարավոր է իրար հասկանալ:

Մարդ համար յոթ նշանակում է մի մարդ, որ անցել է մարդու համար հնարավոր զարգացման ողջ փուլը և ունի այն ամենն, ինչ մարդը կարող է ունենալ. այն է՝ կամք, գիտակցություն, մշտական և անփոփոխ Ես, անհատականություն, անմահություն և շատ այլ հատկություններ, որոնք մենք կուրորեն և անգիտակցաբար վերագրում ենք ինքներս մեզ: Միայն մարդ համար յոթին և նրա հատկությունները որոշակիորեն հասկանալու դեպքում մենք կկարողանանք հասկանալ բոլոր այն աստիճանական փուլերը, որոնց միջոցով կարող ենք մոտենալ նրան և հասկանալ մեզ համար հնարավոր զարգացման գործընթացը:

Մարդ համար վեցը շատ մոտ է կանգնած մարդ համար յոթին: Նա տարբերվում է մարդ համար յոթից նրանով, որ նրա հատկանիշներից մի քանիսը դեռևս *մշտական* բնույթ չեն կրում:

Մարդ համար հինգը նույնպես մեզ համար դժվար հասանելի չափանիշներով մարդ է, քանզի նա ձեռք է բերել *միասնություն*:

Մարդ համար չորսը միջանկյալ փուլում է գտնվում: Ես նրա մասին ավելի ուշ կխոսեմ:

Մարդ համար մեկը, երկուսը և երեքը մեխանիկական մարդկության բաղադրիչներն են և գտնվում են այն նույն մակարդակի վրա, որի վրա ծնվել են:

*Մարդ համար մեկը* մի մարդ է, ում մոտ հոգեկան կյանքի ձգողական ուժն ընկած է շարժողական կենտրոնում: Այս մարդը ֆիզիկական մարմնի մարդ է, ում մոտ շարժողական և բնագոյային գործառույթները մշտապես գերակշռում են զգացմունքային և մտածողության գործառույթներին:

p.72

*Մարդ համար երկուսը* մի մարդ է, որ գտնվում է զարգացման միևնույն մակարդակի վրա, բայց ում հոգեկան կյանքի ձգողական ուժն ընկած է զգացմունքային կենտրոնում, այսինքն՝ մի մարդ ում մոտ *զգացմունքային* գործառույթները գերակշռում են մյուսներին: Նա զգացմունքների և զգացմունքային մարդ է:

*Մարդ համար երեքը* գտնվում է զարգացման միևնույն փուլում, սակայն իր հոգեկան կյանքի ձգողական ուժը գտնվում է ինտելեկտուալ կենտրոնում, այսինքն՝ նա մի մարդ է, ում մոտ մտածողության գործառույթներն են գլխավորում շարժողական, բնագոյային և զգացմունքային կենտրոնները. նա բանականության մարդն է և առաջնորդվում է տեսություններով ու մտավոր կշռադատությամբ:

Յուրաքանչյուր մարդ ծնվում է մարդ համար մեկ, համար երկու կամ համար երեք:

*Մարդ համար չորսը* պատրաստի չի ծնվում: Նա ծնվում է մեկ, երկու կամ երեք և դառնում է չորս միայն որոշակի ջանքերի արդյունքում: Մարդ համար չորսը միշտ որևէ *դպրոցի աշխատանքի արդյունք է*: Նա չի կարող այդպիսին ծնվել, պատահաբար զարգանալ կամ դառնալ այդպիսին դաստիարակության, կրթության և այլնի հետևանքով: Մարդ համար չորսը՝ մարդ համար մեկի, երկուսի, երեքի նկատմամբ, արդեն մեկ այլ մակարդակի վրա է կանգնած. նա ունի *մշտական ձգողական ուժի*

կենտրոն, որը բաղկացած է նրա գաղափարներից, աշխատանքի արժեքվորումից և դպրոցի հանդեպ ունեցած հարաբերությունից: Դեռ ավելին՝ նրա հոգեկան կենտրոնները արդեն հավասարակշռություն են ձեռք բերել. ի տարբերություն առաջին երեք տեսակի մարդկանց՝ կենտրոնները մեկը մյուսի նկատմամբ չեն կարող գերակշռող լինել: Նա սկսում է արդեն ճանաչել ինքն իրեն և գիտի, որ ուղղությամբ է շարժվում:

*Մարդ համար հինգը* արդեն բյուրեղացել է. նա այլևս չի կարող փոխվել ինչպես դա անում են մարդ համար մեկը, երկուսը և երեքը: Սակայն պետք է նկատել, որ մարդ համար հինգը կարող է լինել ինչպես ճիշտ աշխատանքի արդյունք, այնպես էլ սխալ աշխատանքի արդյունք: Նա կարող է համար չորսից համար հինգ դառնալ և կարող է *առանց համար չորս լինելու* համար հինգ դառնալ: Եվ այս դեպքում նա հետագա առաջընթաց չի կարող ունենալ և դառնալ համար վեց կամ համար յոթ: Համար վեց դառնալու համար նա կրկին պետք է լուծարի իր բյուրեղացած էությունը և գիտակցաբար կորցնի իր մարդ համար հինգ լինելը: Դրան կարելի է հասնել միայն դաժան տառապանքների միջոցով: Բարեբախտաբար զարգացման սխալ դեպքերը հազվադեպ են:

Մարդու ստորաբաժանումը յոթ կատեգորիաների կամ յոթ համարների հազարավոր երևույթներ է բացատրում, որոնք այլապես հասկանալի չէին լինի: Այս ստորաբաժանումը հնարավորություն է տալիս ճիշտ պատկերացնել մարդու նկատմամբ *հարաբերականության* կիրառությունը: Իրերը կարող է այս կամ այն կերպ դիտարկվել՝ կախված սովյալ մարդու տեսանկյունից կամ նրանից, թե ում հանդեպ են դրանք կիրառվում:

Վերը նշվածի համաձայն՝ մարդու բոլոր դրսևորումները, թե ներքին, և թե արտաքին, այն ամենն ինչ պատկանում է նրան և այն ամենն, ինչ ստեղծվում է նրա կողմից, նույնպես բաժանվում է յոթ կատեգորիաների:

Այժմ կարելի է ասել, որ գոյություն ունի գիտելիք համար մեկ՝ հիմնված ընդօրինակման և բնագոյների վրա, մի բան, որ անգիր է արվել կամ ներարկվել մարդուն: Համար մեկը, եթե նա բառիս բուն իմաստով համար մեկ է, թութակի և կապիկի պես է ամեն ինչ սովորում :

Համար երկու մարդու գիտելիքները վերաբերում են այն ամենին, ինչ նրան դուր է գալիս. նա չգիտի, թե ինչը նրան դուր չի գալիս: Նա միշտ և ամենուր միայն հաճելին է փնտրում: Կամ, եթե նա հիվանդ մարդ է, ապա ընդհակառակը՝ միայն կիմանա, թե ինչը նրան դուր չի գալիս, թե ինչն է նրան նողկանք պատճառում և ինչն է նրա մեջ վախ, սարսափ կամ զզվանք առաջացնում:

Համար երեք մարդու գիտելիքները հիմնված են սուբյեկտիվ տրամաբանական մտածելակերպի, բառերի, բառացի հասկացողության

վրա: Դա գրամուլների, սխուլաստների գիտելիքն է: Համար երեք մարդիկ, օրինակ, հաշվել են, թե քանի անգամ է արաբական այբուբենի յուրաքանչյուր տառը կրկնվում Մուհամմեդի Ղուրանում և դրա վրա հիմնել Ղուրանի մեկնաբանության մի ողջ համակարգ:

Մարդ համար չորսի գիտելիքները շատ տարաբնույթ են: Այս գիտելիքները գալիս են մարդ համար հինգից, որն իր հերթին ստանում է դրանք մարդ համար վեցից, ով ստացել է իր գիտելիքները մարդ համար յոթից: Բայց իհարկե, մարդ համար չորսը յուրացնում է այս գիտելիքներից միայն մասը, որը ի գորու է: Ի տարբերություն մարդ համար մեկին, երկուսին և երեքին՝ մարդ համար չորսը սկսել է ձեռքագատվել իր գիտելիքների սուբյեկտիվ տարրերից և շարժվել մի ճանապարհով, որ ստանում է դեպի օբյեկտիվ գիտելիքներ:

Մարդ համար հինգի գիտելիքներն ամբողջական գիտելիքներ են: Նա այժմ ունի մեկ անքակտելի Ես, և նրա *ողջ* գիտելիքները պատկանում են իր Ես-ին: Նա չի կարող ունենալ մեկ Ես, որի մասին մյուսը չգիտի: Այն ինչ հայտնի է նրան, հայտնի է նրա ամբողջական Ես-ին: Նրա գիտելիքները ավելի մոտ են օբյեկտիվ գիտելիքներին, քան մարդ համար չորսի գիտելիքները:

Մարդ համար վեցի գիտելիքները այն ամբողջական գիտելիքներն են , որ հնարավոր են մարդու համար, սակայն նա կարող է կորցնել դրանք:

Մարդ համար յոթի գիտելիքները իրեն պատկանող գիտելիքներն են, որոնք հնարավոր չէ խլել նրանից. դրանք *օբյեկտիվ* և ամբողջովին գործնական գիտելիքներն են *Ամեն ինչի մասին*:

Նույնը կարելի է վերագրել գոյին: Կա գոյ, որ պատկանում է մարդ համար մեկին. այն է՝ մի մարդու գոյ, որն ապրում է իր բնագոյներով և զգացողություններով: Մարդ համար երկուսի գոյը՝ սենտիմենտալ և զգացմունքային մարդու գոյն է: Մարդ համար երեքի գոյը ռացիոնալ, տեսական մարդու գոյն է, և այլն: Ակնհայտ է, թե ինչու գիտելիքը գոյից շատ հեռու չի կարող լինել: Մարդ համար մեկը, երկուսը, երեքը չեն կարող մարդ համար չորսի, հինգի և մյուսների գիտելիքներն ունենալ՝ իր իսկ գոյի պատճառով: Ինչ էլ, որ նրան տաս, նա յուրաքանչյուր գաղափար իր ձևով կմեկնաբանի՝ իջեցնելով, հասցնելով ամեն մի գաղափար այն մակարդակի վրա, որի վրա գտնվում է նա ինքը:

Միննույն բաժանումը յոթ կատեգորիաների պետք է կիրառվի այն ամենի նկատմամբ, ինչ վերաբերում է մարդուն: Կա արվեստ համար մեկ, որը մարդ համար մեկի ստեղծած արվեստն է՝ ընդօրինակման, կրկնօրինակման արվեստը, կամ կոպիտ պրիմիտիվ և զգացական արվեստը, ինչպես օրինակ վայրի ցեղերի պարերը և երաժշտությունը: Կա արվեստ համար երկու՝

սենտիմենտալ արվեստը, արվեստ համար երեք՝ ինտելեկտուալ և շինծու, և իհարկե պետք է լինի արվեստ համար չորս, արվեստ համար հինգ և այլն:

Նույնկերպ գոյություն ունի մարդ համար մեկի կրոն, այսինքն՝ կրոն, որ բաղկացած է ծիսակարգերից, արտաքին ձևականություններից, գոհաբերություններից, հանդիսավոր և շքեղ արարողություններից, կամ հակառակը՝ մռայլ, դաժան և վայրի բնույթի արարողություններից: Գոյություն ունի մարդ համար երկրորդի կրոն՝ հավատքի, սիրո, երկրպագության, ներքին խթանի, ոգևոլանքի կրոնը, որը շուտով վերածվում է «հերետիկոսների» ու «հեթանոսների» հալածանքների, ճնշման, ոչնչացման կրոնի: Կա մարդ համար երեքի կրոն. դա ապացույցների և փաստարկների ինտելեկտուալ ու տեսական կրոնն է, որը հիմնված է տրամաբանական հետևությունների, կշռադատությունների և մեկնաբանությունների վրա: Առաջին, երկրորդ և երրորդ կրոնները միակ կրոններն են, որոնց մասին մենք գիտենք. մեզ բոլոր հայտնի և աշխարհում գոյություն ունեցող կրոնները պատակնում են այս երեք կատեգորիաներից մեկին: Թե որոնք են չորրորդ, հինգերորդ և այլնի կրոնները, մենք չգիտենք և չենք կարող իմանալ այնքան ժամանակ, որքան որ մենք մնում ենք այնպիսին ինչպիսին, որ կանք:

Եթե ընդհանրապես կրոնի փոխարեն վերցնենք Քրիստոնեությունը, ապա կրկին կարող ենք ասել, որ գոյություն ունի Քրիստոնեություն համար մեկ, այն է՝ հեթանոսությունը Քրիստոնեության դիմակի տակ: Քրիստոնեություն համար երկուսը զգացմունքային կրոն է, երբեմն շատ անարատ, բայց անուժ, երբեմն լի արյունահեղությամբ և սարսափով, ինչը բերում է ինկվիզիցիայի և կրոնական պատերազմների: Քրիստոնեություն համար երեքը, որի օրինակը կարող են հանդիսանալ բողոքականության տարբեր ձևերը, հիմնված է դիալեկտիկայի, փաստարկների, տեսությունների և այլնի վրա: Կա Քրիստոնեություն համար չորս, որի մասին մարդ համար մեկը, համար երկուսը և համար երեք որևէ գաղափար չունեն:

Իրականում Քրիստոնեություն համար մեկը, համար երկուսը, համար երեքը պարզապես արտաքին իմիտացիա է: Միայն համար հինգն է ձգտում դառնալ քրիստոնյա, և միայն համար հինգը կարող է քրիստոնյա լինել:

p.74-75

Քրիստոնյա լինել նշանակում է քրիստոնյա գոյ ունենալ, այսինքն՝ ապրել Քրիստոսի պատվիրաններին համաձայն:

Մարդ համար մեկ, համար երկու, համար երեքը չեն կարող ապրել Քրիստոսի պատվիրաններով, քանի որ նրանց հետ ամեն ինչ «տեղի է ունենում»: Այսօր մի բան, ուրիշ օր՝ մեկ այլ բան: Այսօր նրանք պատրաստ են իրենց վերջին շապիկը տալ ուրիշին, իսկ հաջորդ օրը՝ մարդուն կտորկտոր կանեն նրա համար, որ վերջինս հրաժարվում է իր շապիկը տալ իրենց: Ամեն պատահական միջադեպ կարող է նրանց մի կողմից մյուս կողմ նետել: Նրանք իրենց տերը չեն և այդ պատճառով չեն կարող որոշել քրիստոնյա դառնալ և իսկական քրիստոնյա լինել:

Գիտությունը, փիլիսոփայությունը և մարդկային կյանքի և գործունեության բոլոր դրսևորումները կարող են ճիշտ նույն ձևով բաժանվել յոթ կատեգորիաների: Սակայն սովորական լեզուն, որով մարդիկ խոսում են զերծ է նման բաժանումներից, և հենց այդ պատճառով էլ դժվար է նրանց համար միմիանց հասկանալ:

Վերլուծելով «մարդ» բառի տարբեր սուբյեկտիվ իմաստները՝ մենք տեսանք, թե որքան տարաբնույթ, հակասական, և ամենից առաջ՝ նույնիսկ խոսողի համար թաքնված և աննկատելի կարող են լինել իմաստները և իմաստային երանգները, որոնք ստեղծվում են բառին հաղորդող ընդունված գուգորդությունների միջոցով:

Եկեք մեկ այլ բառ դիտարկենք, օրինակ «աշխարհ» բառը: Յուրաքանչյուր մարդ ընկալում է այն յուրովի: «Աշխարհ» բառը լսելիս կամ արտասանվիս ամեն մեկի մոտ առաջանում են տարբեր ասոցիացիաներ, որոնք օտար և անհասկանալի կարող են թվալ մյուսների համար:

«Աշխարհի յուրաքանչյուր հասկացողություն», մտածողության յուրաքանչյուր սովորական ձև իր հետ բերում է իր սեփական գուգորդությունները, իր սեփական գաղափարները:

Աշխարհը կրոնական տեսանկյունից դիտարկող մարդու՝ քրիստոնյաի համար «աշխարհ» բառը կարող է առաջացնել մի շարք կրոնական մտքեր. այն կկապվի Աստծո գաղափարի, աշխարհի ստեղծման գաղափարի կամ «մեղսավոր» աշխարհի հետ և այլն:

Վեդանտիկ փիլիսոփայության հետևորդների համար աշխարհն ամենից առաջ կլինի խաբկանք՝ «մայա»:

Թեոսոֆը կսկսի մտածել տարբեր «մակարդակներից»՝ ֆիզիկական, աստեղային, մտավոր և այլն:

Սպիրիտուալիստը կմտածի «հանդերձյալ աշխարհի»՝ հոգիների աշխարհի մասին:

Ֆիզիկոսը կդիտարկի աշխարհը նյութի կառուցվածքի տեսանկյունից. դա կլինի մոլեկուլների, ատոմների կամ էլեկտրոնների աշխարհը:

Աստղագետի համար աշխարհ կնշանակի աստղերի և մշուշների աշխարհ:

Եվ այսպես շարունակ: Ֆենոմենալ և նոմենալ աշխարհը, չորրորդ և այլ մեծությունների աշխարհը, բարու և չարի աշխարհը, մատերիալիստական և ոչ մատերիալիստական աշխարհը, ուժի համամասնությունը աշխարհի տարբեր ազգերի մոտ, արդյոք կարո՞ղ է մարդը «փրկվել» և այլն, և այլն:

Մարդիկ աշխարհի մասին հազարավոր տարբեր մտքեր ունեն, սակայն չունեն մեկ ընդհանուր գաղափար, որը հնարավորություն կտար նրանց միմյանց հասկանալու և անմիջապես որոշելու, թե որ տեսանկյունից են նրանք ցանկանում դիտարկել աշխարհը:

Հնարավոր չէ ուսումնասիրել տիեզերական համակարգը՝ չուսումնասիրելով մարդուն: Միևնույն ժամանակ հնարավոր չէ ուսումնասիրել մարդուն՝ չուսումնասիրելով տիեզերքը: Մարդը տիեզերքի պատկերն է: Նա ստեղծվել է համաձայն այն նույն օրենքների, ըստ որի ստեղծվել է ողջ աշխարհը: Իրեն ճանաչելով և հասկանալով՝ նա կճանաչի ողջ աշխարհը, բոլոր այն օրենքները, որոնք ստեղծում և ղեկավարում են աշխարհը: Միաժամանակ, ուսումնասիրելով աշխարհը և այն կառավարող օրենքները՝ նա կսովորի և կհասկանա այն օրենքները, որ կառավարում են իրեն: Այս կապակցությամբ որոշ օրենքներ ավելի հեշտությամբ կարելի է ըմբռնել և յուրացնել օբյեկտիվ աշխարհի ուսումնասիրության դեպքում, մինչդեռ մյուս օրենքների ըմբռնումը մարդու համար հնարավոր կդառնա ինքն իրեն ուսումնասիրելու դեպքում: Հետևաբար աշխարհի ուսումնասիրությունը և մարդու ուսումնասիրությունը պետք է ընթանա զուգահեռ՝ մեկը մյուսին օժանդակելով:

«Աշխարհ» տերմինի կապակցությամբ ի սկզբանե անհրաժեշտ է հասկանալ, որ գոյություն ունեն շատ աշխարհներ, և որ մենք ապրում ենք ոչ թե մեկ աշխարհում, այլ մի քանի աշխարհներում: Սակայն դա այդպես չի ընկալվում, քանի որ սովորական լեզվում «աշխարհ» բառը եզակի թվով է գործածվում: Եվ եթե օգտագործվում է «աշխարհներ» տերմինը հոգնակի թվով, ապա դա արվում է շեշտադրելու համար միևնույն գաղափարը կամ արտահայտելու համար զուգահեռաբար գոյություն ունեցող տարբեր աշխարհները: Մեր լեզուն չի պարունակում այն գաղափարը, որ աշխարհները կարող են մեկը մյուսի մեջ ամփոփված լինել: Մինչդեռ այն գաղափարը, որ մենք ապրում ենք տարբեր աշխարհներում ենթադրում է այն աշխարհները, որոնք ամփոփված են մեկը մյուսի մեջ և որոնց հետ մենք տարբեր հարաբերությունների մեջ ենք գտնվում:

Եթե ցանկանում ենք պատասխան ստանալ այն հարցին, թե ինչ է աշխարհը կամ ինչ են աշխարհները, որոնցում մենք ապրում ենք, մենք ամենից առաջ պետք է հարցնենք ինքներս մեզ, թե ինչ ենք կոչում այն



«աշխարհը», որի հետ մենք ամենամոտ և անմիջական հարաբերության մեջ ենք գտնվում:

Այս հարցին մենք կարող ենք պատասխանել, ասելով, որ մենք «աշխարհ» կոչում ենք մարդկանց, մարդկության աշխարհը, որում ապրում ենք, որի մասնիկն ենք կազմում: Սակայն մարդկությունը օրգանական կյանքի անբաժան մի մասն է կազմում, հետևաբար ճիշտ կլիներ ասել մեզ ամենամոտ կանգնած աշխարհն *աշխարհի վրա օրգանական կյանքն է*, բույսերի, կենդանիների և մարդկանց աշխարհը:

Սակայն օրգանական կյանքը նույնպես աշխարհի վրա է: Այդ դեպքում ի՞նչ է «աշխարհն» օրգանական կյանքի համար:

Այս հարցին կարող ենք պատասխանել, որ օրգանական կյանքի համար մեր Երկիր մոլորակն է «աշխարհը»:

Սակայն Երկիր մոլորակը նույնպես տեղակայված է աշխարհում: Ապա ի՞նչ է «աշխարհը» Երկիր մոլորակի համար:

«Աշխարհը» Երկիր մոլորակի համար Արեգակնային համակարգի մոլորակների աշխարհն է, որի մասն է կազմում նաև ինքը:

Ի՞նչ է «աշխարհը» բոլոր մոլորակների համար իրար հետ միասին վերցրած: Դա Արևն է, Արևի ազդեցության գոտին, Արեգակնային համակարգը, որի մասն են կազմում մոլորակները:

Արևի համար, իր հերթին, «աշխարհը» մեր աստղերի կամ Ծիր Կաթնի աշխարհն է, Արեգակնային համակարգերի մեծ քանակությունը:

Դեռ ավելին՝ աստղագիտության տեսանկյունից կարելի է ենթադրել, որ գոյություն ունի աշխարհների բազմություն, որոնք «բոլոր աշխարհների» տիեզերական տարածության մեջ իրարից հսկայական հեռավորության վրա են գտնվում: Այս աշխարհներն իրար հետ վերցրած կազմում են Ծիր Կաթնի աշխարհը:

Փիլիսոփայական եզրահանգումներ կատարելիս մենք կարող ենք ասել, որ բոլոր «աշխարհները» մեզ համար անհասկանալի և անհայտ Ամբողջություն և Միասնություն են կազմում (ինչպես խնձորը): Այս Ամբողջությունը, Միասնությունը կամ *Ամենը* «աշխարհ» է բոլոր աշխարհների համար. այն կարելի է անվանել «Բացարձակ» կամ «Անկախ», քանի որ պարունակելով ամեն ինչ, այն որևէ բանից կախում չունի: Տրամաբանականորեն հեշտությամբ հնարավոր է պատկերացնել մի իրավիճակ որտեղ Ամենը կազմում է մեկ եզակի Ամբողջություն: Նման ամբողջությունը իհարկե կլինի Բացարձակ, ինչը կնշանակի Անկախ, քանի որ Ամենը անձայրածիր է և անքակտելի:

Բացարձակը, այսինքն՝ իրերի այն դրությունը, երբ Ամենը կազմում է մեկ Ամբողջություն, իրերի սաղմնային վիճակն է կարծես, որից բաժանման և

տարբերակման միջոցով մեր կողմից դիտարկվող երևույթներում առաջանում է այլազանություն:

Մարդն ապրում է բոլոր այս աշխարհներում, բայց տարբեր ձևերով:

Դա նշանակում է, որ առաջին հերթին նրա վրա ազդում է նրան *ամենամոտ* գտնվող աշխարհը, անմիջապես նրան հարող աշխարհը, որի մի մասն է կազմում նա: Նրանից ավելի հեռու գտնվող աշխարհները նույնպես ազդում են մարդու վրա անմիջականորեն կամ այլ միջանկյալ աշխարհների միջոցով, սակայն նրանց գործողությունը համաչափորեն նվազում է՝ կախված աշխարհների հեռավորությունից կամ մարդու և նրանց միջև եղած տարբերություններից: Ինչպես կերևա ավելի ուշ, Բացարձակի ազդեցությունը մարդկանց վրա *անմիջական* չէ: Սակայն հաջորդ աշխարհի կամ աստղերի աշխարհի ազդեցությունը մարդու կյանքում ակնհայտ է, չնայած այն բանի, որ գիտությանը դրանք անհայտ են»:

Սրանով Գ.-ն եզրափակեց իր դասախոսությունը:

Հաջորդ անգամ մենք բազմաթիվ հարցեր տվեցինք՝ գլխավորապես տարբեր աշխարհների ազդեցությունների վերաբերյալ, ինչպես նաև այն մասին, թե ինչու Բացարձակի ազդեցությունը մեզ վրա չի անդրադառնում:

«Նախքան կուսումնասիրենք այս ազդեցությունները», - սկսեց Գ.-ն, «ինչպես նաև այն օրենքները, որոնց համաձայն Միասնությունը վերաձևակերպվում է Հոգնակիության, մենք պետք է ուսումնասիրենք *հիմնարար օրենքը*, որ ստեղծում է բոլոր երևույթներն իրենց բազմազանությամբ և միասնությամբ:

Դա «Երեքի Օրենքն է»՝ *երեք սկզբունքների* կամ *երեք ուժերի* օրենքը: Փաստն այն է, որ յուրաքանչյուր երևույթ, որքան էլ այն մեծ լինի և որ աշխարհում էլ այն տեղի ունենա, սկսած մոլեկուլյար երևույթներից և վերջացրած տիեզերական երևույթներով՝ երեք տարբեր և հակադիր ուժերի համադրության կամ համակցման արդյունք է: Ժամանակակից միտքը այդ երևույթների առաջացման համար ընդունում է երկու ուժերի գոյություն՝ ուժ և դիմադրողականություն, դրական և բացասական մագնիսականություն, դրական և բացասական էլեկտրականություն, տղամարդկային և կանացի բջջիջներ և այլն: Սակայն նույնիսկ այս երկու ուժերը չեն դիտարկվում միշտ և ամենուր: Որևէ հարց չի հնչել երրորդ ուժի վերաբերյալ և եթե նույնիսկ հնչել է, ապա հազիվ թե այն լսվել է:

Ճշգրիտ գիտելիքների համաձայն՝ մեկ կամ երկու ուժերը երբևիցե որևէ երույթ չեն կարող առաջացնել: Անհրաժեշտ է երրորդ ուժի առկայությունը, քանի որ միայն երրորդ ուժի օգնությամբ է, որ առաջին երկուսը

կարողանում են, այսպես կոչված, երևույթներ առաջացնել՝ անկախ բնագավառից:

Երեք ուժերի ուսմունքը ընկած է բոլոր հնագույն համակարգերի հիմքում: Առաջին ուժը կարելի է կոչել ակտիվ կամ դրական, երկրորդը՝ պասիվ կամ բացասական, երրորդը՝ չեզոք: Սակայն սրանք *սոսկ անվանումներ* են, քանի որ իրականում բոլոր այս ուժերն էլ հավասարապես ակտիվ են և հանդես են գալիս որպես ակտիվ, պասիվ կամ չեզոք դիրքերում միայն միմյանց հետ հանդիպման կետում, այսինքն՝ միայն *կոնկրետ պահին մեկը մյուսի հետ հարաբերվելիս*: Առաջին երկու ուժերը քիչ թե շատ հասկանալի են մարդու համար, իսկ երրորդի բացահայտումը հնարավոր է ուժերի կիրառման պահին կամ «միջնորդության» կամ «արդյունքի» դեպքում: Ընդհանուր առմամբ՝ երրորդ ուժը հեշտությամբ հասանելի չէ ուղղակի դիտարկման կամ ընկալման դեպքում: Դրա պատճառը անհրաժեշտ է փնտրել մարդու առօրյա հոգեբանական գործունեության ֆունկցիոնալ սահմանափակումների մեջ և մեր կողմից աշխարհի երևույթների ընկալման ֆունդամենտալ կատեգորիաների մեջ, այսինքն՝ այս սահմանափակումների արդյունքում առաջացած ժամանակի և տարածության մեր ընկալման մեջ: Մարդիկ չեն կարող ուղղակիորեն ընկալել և դիտարկել երրորդ ուժը, ինչպես և չեն կարող տարածության մեջ ընկալել «չորրորդ չափումը»:

p.78

Ուսումնասիրելով ինքն իրեն, իր մտածողության դրսևորումները, գիտակցությունը, գործունեությունը, իր սովորությունները, ցանկությունները՝ մարդը կարող է սովորել դիտարկել և տեսնել, թե ինչպես են նրա մոտ գործում այդ երեք ուժերը: Եկեք ենթադրենք, որ մարդը ցանկանում է իր վրա աշխատել և փոխել նրան բնորոշ որոշ գծեր՝ առավել բարձր գոյ ձեռք բերելու նպատակով: Նրա ցանկությունը, նախաձեռնությունը ակտիվ ուժն է: Նրա առօրյա հոգեբանական կյանքի իներցիան, որը հակադրվում է նրա նախաձեռնությանը, կլինի պասիվ կամ բացասական ուժը: Երկու ուժերը կամ հավասարակշռության կհանգեցնեն, կամ մեկը ամբողջովին կհաղթանակի մյուսին, սակայն միևնույն ժամանակ այն շատ կթուլանա հետագա գործողության համար: Այսպիսով, երկու ուժերը կպտտվեն մեկը մյուսի շուրջ՝ կլանելով մեկը մյուսին, չհանգեցնելով որևէ արդյունքի: Սա կարող է շարունակվել ողջ կյանքի ընթացքում: Մարդը կարող է ունենալ ցանկության և նախաձեռնության զգացում: Սակայն ողջ իր նախաձեռնությունը գնում է առօրյա կյանքի իներցիայի հաղթահարմանը՝ ոչինչ չթողնելով նպատակի համար, որին պետք է

ուղղվեր նախաձեռնությունը: Դա կարող է շարունակվել այսկերպ մինչ երրորդ ուժի երևան գալը, օրինակ՝ *նոր գիտելիքների ձևով*, որը ցույց կտա ինք իր վրա աշխատելու առավելությունը կամ անհրաժեշտությունը՝ այսկերպ աջակցելով և հզորացնելով նախաձեռնությունը: Այնուհետև նախաձեռնությունը, երրորդ ուժի աջակցությամբ, հաղթահարում է իներցիան, որի արդյունքում մարդը ցանկալի ուղղությամբ է ակտիվանում:

Երեք ուժերի գործունեության և երրորդ ուժի մուտքի պահերի օրինակներ կարելի է հանդիպել մեր հոգեկան կյանքի բոլոր դրսևորումներում, մարդկային համայնքների և ընդհանրապես ողջ մարդկության կյանքին վերաբերող, ինչպես նաև մեզ շրջապատող բնության բոլոր երևույթներում:

Սակայն սկզբում բավական է հասականալ համընդհանուր սկզբունքը. յուրաքանչյուր երևույթ, անկախ դրա չափից, երեք ուժերի դրսևորումն է. մեկ կամ երկու ուժ չեն կարող ստեղծել որևէ երևույթ: Եվ եթե մենք որևէ պահի զգանք դադար կամ մշտական տատանում միևնույն վայրում, ապա կարող ենք ասել, որ տվյալ վայրում բացակայում է երրորդ ուժը: Փորձելով հասկանալ այս ամենը՝ միաժամանակ անհրաժեշտ է հիշել, որ մարդիկ չեն կարող դիտարկել երևույթները որպես երեք ուժերի դրսևորում, քանի որ նրանք, ունենալով սուբյեկտիվ գիտակցություն, ունակ չեն օբյեկտիվորեն դիտարկելու աշխարհը: Իսկ սուբյեկտիվ տեսանկյունից դիտարկվող երևույթների աշխարհում մենք նկատում ենք միայն մեկ կամ երկու ուժերի դրսևորումները: Եթե յուրաքանչյուր գործողության մեջ կարողանայինք տեսնել երեք ուժերի դրսևորումը, ապա կտեսնեինք աշխարհն այնպես, ինչպես որ այն կա (կտեսնեինք իրերն իրենցում): Սակայն այստեղ պետք է նաև հիշել, որ հասարակ թվացող երևույթներն իրականում կարող են շատ խորթին լինել, այսինքն՝ դրանք կարող են իրենցից ներկայացնել երրորդությունների շատ բարդ համադրություն: Սակայն մենք գիտենք, որ չենք կարող դիտարկել աշխարհն այնպես,

p.79

ինչպես որ այն կա, և դա պետք է մեզ օգնի հասկանալ, թե ինչու չենք կարողանում տեսնել երրորդ ուժը: Երրորդ ուժը իրական աշխարհի հատկություններից է: Ֆենոմենալ կամ մեր դիտարկումների վրա հիմնված սուբյեկտիվ աշխարհը միայն հարաբերականորեն է իրական. ամեն դեպքում այն ամբողջական չէ:

Անդրադառնալով այն աշխարհին, որում ապրում ենք՝ այժմ կարող ենք ասել, որ Բացարձակում, ինչպես ամենուր, ակտիվ են երեք ուժեր՝ ակտիվ, պասիվ և չեզոք: Բայց քանի որ իր բնույթով Բացարձակում ամեն ինչ մեկ ամբողջություն է, երեք ուժերը նույնպես կազմում են մեկ ամբողջություն:

Դեռ ավելին՝ կազմելով մեկ ինքնուրույն ամբողջություն, երեք ուժերն ունեն ամբողջական և ինքնուրույն կամք, ամբողջական գիտակցություն, իչպես իրենց, այնպես էլ իրենց յուրաքանչյուր գործողության ամբողջական ըմբռնողություն:

Երեք ուժերի միասնությունը Բացարձակում ընկած է շատ հնագույն ուսմունքների հիմքում՝ միաբնակ և անբաժանելի Երրորդությունը, Տրիսուրտին (Բրահմա, Վիշնու, Շիվա) և այլն:

Բացարձակի երեք ուժերը՝ կազմելով մեկ ամբողջություն, միանում և առանձնանում են ինքնակամ և ինքնուրույն որոշմամբ, իսկ միացության կետում նրանք ստեղծում են երևույթներ կամ «աշխարհներ»: Այս աշխարհները, որոնք ստեղծվում են Բացարձակի կամքով, իրենց գոյության հարցում ամբողջովին կախման մեջ են գտնվում այս կամքից: Տվյալ աշխարհներից յուրաքանչյուրում կրկին գործում են երեք ուժեր: Սակայն, քանի որ այս աշխարհներից յուրաքանչյուրն ամբողջական չէ, այլ մասնակի, հետևաբար նրանցում այդ երեք ուժերը նույնպես չեն կազմում մեկ ամբողջություն: Այժմ մենք գործ ունենք երեք կամքերի, երեք գիտակցությունների, երեք միասնությունների հետ: Երեք ուժերից յուրաքանչյուրը պարունակում է մյուս երեք ուժերի հնարավորությունը, բայց երեք ուժերի հանդիպման կետում նրանցից յուրաքանչյուրը միայն մեկ սկրունքով է հանդես գալիս՝ ակտիվ, պասիվ կամ չեզոք: Երեք ուժերը միասին ձևավորում են մեկ ամբողջություն, որը ստեղծում է նոր երևույթներ: Սակայն այս երրորդությունը տարբեր է այն նման չէ Բացարձակում առկա երրորդությանը, որտեղ երեք ուժերը անքակտելի ամբողջություն են կազմում և ունեն մեկ եզակի կամք և մեկ եզակի գիտակցություն: Երկրորդ կարգի աշխարհներում երեք ուժերն այժմ բաժանելի են և նրանց հանդիպման կետերը տարաբնույթ են: Բացարձակում պահը և ուժերի հանդիպման կետը կանխորոշվում է նրանց եզակի կամքով: Երկրորդ կարգի աշխարհներում, որտեղ այլևս չկա եզակի կամք, այլ առկա են երեք կամքեր, արձակման կետերից յուրաքանչյուրը կանխորոշվում է ~~է~~ առանձին կամքով՝ մյուսներից անկախ, և հետևաբար հանդիպման կետը դառնում է պատահական կամ մեխանիկական: Բացարձակի կամքը ստեղծում է երկրորդ կարգի աշխարհները և կառավարում դրանք, սակայն այն չի կառավարում նրանց

p.80

ստեղծագործական աշխատանքը, որում արդեն իսկ ի հայտ է գալիս մեխանիկական տարրը:

Պատկերացնենք Բացարձակը որպես շրջանակ և դրանում երկրորդ կարգի աշխարհների մի շարք այլ շրջանակներ: Եկեք դիտարկենք շրջանակներից մեկը: Բացարձակը նշանակված է թիվ 1-ով, քանի որ երեք ուժերը Բացարձակում կազմում են մեկ ամբողջություն, իսկ փոքր շրջանակները կնշենք թիվ 3-ով, քանի որ երկրորդ կարգի աշխարհում երեք ուժերը արդեն բաժանված են:

Երեք բաժանված ուժերը, տեղակայված լինելով երկրորդ դասին պատկանող աշխարհներում և հանդիպելով այս աշխարհներից յուրաքանչյուրում, ստեղծում են երրորդ դասին պատկանող նոր աշխարհներ: Եկեք դիտարկենք այս աշխարհներից մեկը: Երրորդ դասի աշխարհները, որոնք ստեղծվել են կիսամեխանիկական երեք ուժերի միջոցով, ոչ թե կախված են Բացարձակի եզակի կամքից, այլ փոխարենը ենթարկվում են երեք մեխանիկական աշխարհներին: Այս աշխարհները ստեղծվել են երեք ուժերի միջոցով: Ստեղծվելով այսպես, նրանցում դրսևորվում են իրենց նոր ուժերը: Այսպիսով երրորդ դասի աշխարհներում գործող ուժերը կկազմեն վեցը: Գծապատկերում երրորդ դասի շրջանակը նշված է թիվ 6-ով (3-ին գումարած 3): Այս աշխարհներում ստեղծվում են նոր դասի՝ չորրորդ դասին պատկանող աշխարհներ: Չորրորդ դասի աշխարհներում գործում են երկրորդ աշխարհի երեք ուժերը, երրորդ աշխարհի վեց ուժերը և հենց իրենց պատկանող երեք ուժեր, որոնք միասին կկազմեն տասներկու ուժ: Եկեք այդ աշխարհներից մեկը նշանակենք թիվ 12-ով (3-ին գումարած 6, գումարած 3): Ենթարկվելով ավելի մեծ քանակությամբ օրենքների՝ այս աշխարհները ավելի հեռու են գտնվում Բացարձակից և ավելի մեխանիկական են: Այս աշխարհում ստեղծված աշխարհները կառաջնորդվեն քսանչորս ուժերով (3-ին գումարած 6, գումարած 12, գումարած 3): Այս աշխարհներում ստեղծված աշխարհները կառաջնորդվեն քառասունութ ուժերով, որտեղ թիվ 48 ստացել ենք հետևյալ կերպով՝ երեք ուժեր, որոնք անմիջապես հետևում են Բացարձակին, վեցը պատկանում են հաջորդին, տասներկուսը հաջորդին, քսանչորսը հաջորդին, իսկ երեքն էլ պատկանում են հենց իրեն (3 գումարած 6, գումարած 12, գումարած 24, գումարած 3)՝ ընդամենը՝ քառասունութ: Աշխարհ 48-ում ստեղծված աշխարհները կառաջնորդվեն ինսունվեց ուժերով (3 գումարած 6, գումարած 12, գումարած 24, գումարած 48, գումարած 3): Հաջորդ դասի աշխարհները, եթե դրանք գոյություն ունեն, կառաջնորդվեն 192 ուժերով և այսպես շարունակ:

Եթե մենք վերցնենք Բացարձակում ստեղծված աշխարհներից մեկը, այն է՝ աշխարհ 3-ը, ապա դա կլինի աստղերի աշխարհների ընդհանուր թիվը, որը նման է մեր Ծիր Կաթնին: Եթե վերցնենք աշխարհ 6-ը, ապա դա կլինի այս

աշխարհներից մեկում ստեղծված աշխարհը, այն է՝ աստղերի կուտակումը, որ մենք կոչում ենք Ծիր Կաթին: Աշխարհ 12-ը կլինի արևներից մեկը, որ մտնում է Ծիր Կաթնի կազմի մեջ, այսինքն՝ մեր Արևը: Աշխարհ 24-ը կլինի մոլորակների աշխարհը, այսինքն՝ Արեգակնային համակարգի բոլոր մոլորակները: Աշխարհ 48-ը կլինի Երկիր մոլորակը: Աշխարհ 96-ը կլինի Լուսինը: Եթե Լուսինն ունենար արբանյակ, ապա դա կլիներ աշխարհ 192-ը և այլն:

Աշխարհների շղթան, որի հանգույցներն են Բացարձակը, բոլոր աշխարհները, բոլոր արևները, մեր Արևը, մոլորակները, Երկիր մոլորակը և Լուսինը, իրենից ներկայացնում է «արարման ճառագայթը», որում և գտնվում ենք մենք: Արարման ճառագայթը մեզ համար «աշխարհ» է: Իհարկե արարման ճառագայթը չի ընդգրկում «աշխարհ»-ը՝ բառի ամբողջական իմաստով, քանի որ Բացարձակը ծնում է մի շարք, և միգուցե անթիվ, անհամար, տարբեր աշխարհներ, որոնցից յուրաքանչյուրը նոր և առանձին արարման ճառագման սկզբ է: Դեռ ավելին՝ այս աշխարհներից յուրաքանչյուրը պարունակում է մի շարք աշխարհներ, որոնք իրենցից ներկայացնում են արարման ճառագայթի ևս մեկ բաժանում. այս աշխարհներից մենք կրկին ընտրում ենք միայն մեկը՝ մեր Ծիր Կաթինը: Ծիր Կաթինը բաղկացած է մի շարք արևներից, բայց դրանցից մենք ընտրում ենք միայն մեկ արև, որը մեզ ամենամոտն է գտնվում, որից մենք անմիջական կախման մեջ ենք գտնվում, որում մենք ապրում, շարժվում և գոյատևում ենք: Մյուս արևներից յուրաքանչյուրը նշանակում է ճառագայթի նոր մասնատում, սակայն մենք չենք կարող ուսումնասիրել այդ ճառագայթն այնպես, ինչպես մերը՝ այն ճառագայթը, որում մենք տեղակայված ենք: Այնուհետև, արեգակնային համակարգի ներքո մոլորակների աշխարհն ավելի մոտ է գտնվում մեզ, քան ինքն Արևը, իսկ մոլորակների աշխարհում մեզ ամենամոտը Երկիր մոլորակն է, որի վրա մենք ապրում ենք: Մենք կարիք չունենք ուսումնասիրելու մյուս մոլորակներն այնպես, ինչպես ուսումնասիրում ենք մեր Երկիր մոլորակը: Մեզ բավական է դիտարկել դրանք բոլորը միասին, այն է՝ ավելի փոքր մասշտաբով, քան Երկիր մոլորակը:

Յուրաքանչյուր աշխարհում եղած ուժերի թիվը 1, 3, 6, 12 և այլն մատնանշում են այն օրենքների քանակը, որոնց ենթակա է տվյալ աշխարհը:

Որքան քիչ են օրենքները տվյալ աշխարհում, այնքան նա ավելի մոտ է Բացարձակին. որքան ավելի շատ են օրենքները տվյալ աշխարհում, այնքան ավելի բարձր է մեխանիկականության աստիճանը, այնքան ավելի հեռու է այն Բացարձակի կամքից: Մենք ապրում ենք մի աշխարհում, որն

ենթակա է կարգ ու կանոնի քառասունութ օրենքների, այսինքն՝ շատ հեռու ենք Բացարձակի կամքից և տիեզերքի շատ հեռավոր և մութ անկյունում ենք գտնվում:

Այսկերպ արարման ճառագայթը օգնում է մեզ սահմանել և գիտակցել մեր տեղը աշխարհում: Սակայն, ինչպես տեսնում եք, դեռևս չենք անդրադարձել ազդեցությունների հարցին: Տարբեր աշխարհների ազդեցությունների տարբերությունները հասկանալու համար մենք նախ պետք է լավ հասկանանք երեքի օրենքը, իսկ դրանից հետո՝ ավելի ֆունդամենտալ օրենքը՝ Յոթի Օրենքը կամ *օկտավաների օրենքը*: